ԱՆՆԱ ՌՈՒԶՎԵԼՏԻ ՄԱԿԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԵՐԸ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ներմուծման ծավալների աճը մի շարք երկրների պարագայում հանգեցրել է տնտեսական աճի: Այսպիսի երկրների թվին են պատկանում «տնտեսական հրաշք» համարվող Ճապոնիան[1], Հարավային Կորեան[2], ըստ Սաքսի «Զարգացած երկրների եկամուտների և տեխնոլոգիաների մակարդակին հասնելու» (Catching-up) տնտեսական աճի մոդելով[3] առաջնորդվող երկրները (որոնց հաջողությունը պայմանավորված է եղել արտահանման խթանման քաղաքականությամբ, ինչպես նաև մեծ ծավալների հասնող օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմամբ), ինչպիսիք են Մալայզիան, Ինդոնեզիան, Ֆիլիպինները և Թաիլանդը[4], ինչպես նաև Արգենտինան, Կոլումբիան, Պերուն[5], Պարագվայը, Չիլին, Կոստա Ռիկան, Գվատեմալան, Հոնդուրասը[6], Հնդկաստանը[7], Բելառուսը, Բուլղարիան, Չեխիան, Էստոնիան, Ղազախստանը, Լատվիան, Լիտվան, Լեհաստանը,

---

[1] Wenyu Zang & Mark Bainbridge (2012) Exports, imports and economic growth in South Korea and Japan: a tale of two economies, Applied Economics, 44:3, p.368, DOI: 10.1080/00036846.2010.508722.

[2] Նույն տեղում: Sangho Kim, Hyunjoon Lim & Donghyun Park (2009) Imports, exports and total factor productivity in Korea, Applied Economics, 41:14, p.1831, DOI: 10.1080/00036840601032243:

[3] Sachs, J. D. (2000). Globalization and patterns of economic development, Weltwirtschaftliches Archiv, 136(4), p.581, DOI: 10.1007/BF02707644.

[4] Marwah, K. and Tavakoli, A. (2004) The effect of foreign capital and imports on economic growth: further evidence from four Asian countries (1970–1998), Journal of Asian Economics, 15, p.400, 411 DOI: 10.1016/j.asieco.2004.02.008.

[5] Titus O. Awokuse (2008) Trade openness and economic growth: is growth export-led or import-led?, Applied Economics, 40:2, p.172, DOI: 10.1080/00036840600749490.:

[6] Werner Kristjanpoller R & Josephine E. Olson (2014) Economic Growth in Latin American Countries: Is It Based on Export-Led or Import-Led Growth?, Emerging Markets Finance and Trade, 50:sup1, p.16, DOI: 10.2753/REE1540-496X5001S101:

[7] Shandre Mugan Thangavelu & Gulasekaran Rajaguru (2004) Is there an export or import-led productivity growth in rapidly developing Asian countries? a multivariate VAR analysis, Applied Economics, 36:10, p.1089, DOI:10.1080/0003684042000246795.

Ռուսաստանը, Սլովակիան, Սլովենիան[1] և այլն: Այս երկրներից որոշների պարագայում հաստատվել է «ներմուծմամբ պայմանավորված տնտեսական աճի» վարկածի գոյությունը («import-led growth hypothesis»)[2]:

Տնտեսական աճի վրա ներմուծման ծավալների աճի դրական ազդեցությունը բացատրվում է նրանով, որ կապիտալի, ինչպես նաև միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանքների ներմուծումը ավելացնում է տեղական արտադրության ծավալների աճը, իսկ հատկապես ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծումը բարձրացնում է ամբողջ տնտեսության արտադրողականությունը[3]: Զարգացող երկրների դեպքում միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանքների ներմուծումը թույլ է տալիս տեղական արտադրողներին օգտագործել ավելի բարձրորակ հումք և այլ հավելյալ ապրանքներ արտադրության մեջ, ինչպես նաև օգտվել տեխնոլոգիաների փոխանցումից (զարգացած երկրներից)՝ «սովորել ներմուծման միջոցով» (learning by importing) երևույթի առկայության շնորհիվ, որի հետևանքով ևս բարձրանում է տեղական ընկերությունների արտադրողականությունը (Քոնթի և այլոք)[4]:

Մյուս կողմից՝ ըստ Թանգավելուի և Ռաջանգուրուի, եթե երկրները (հատկապես զարգացող երկրները) հիմնականում արտահանում են աշխատատար ապրանքներ, ինչը համարվում է արտարժույթի աղբյուր, ապա այդ գումարները կարող են ուղղվել համապատասխան տեխնոլոգիաների ներմուծման վրա և այս պարագայում արտադրողականության աճի վրա ավելի մեծ ազդեցություն կարող է թողնել ներմուծման ծավալների, քան արտահանման ծավալների փոփոխությունը, որի արդյունքում արտադրողականության աճը պայմանավորված է ներմուծման ծավալ-

---

[1] Çetintaş, H. & Barişik, S. (2009) Export, Import and Economic Growth: The Case of Transition Economies, Transition Studies Review, 15, p.645, 647, DOI:10.1007/s11300-008-0043-0

[2] Werner Kristjanpoller R & Josephine E. Olson (2014) Economic Growth in Latin American Countries: Is It Based on Export-Led or Import-Led Growth?, Emerging Markets Finance and Trade, 50:sup1, p.16, DOI: 10.2753/REE1540-496X5001S101: Titus O. Awokuse (2008) Trade openness and economic growth: is growth export-led or import-led?, Applied Economics, 40:2, p.172, DOI: 10.1080/00036840600749490.

[3] Wenyu Zang & Mark Bainbridge (2012) Exports, imports and economic growth in South Korea and Japan: a tale of two economies, Applied Economics, 44:3, pp.368-369, DOI: 10.1080/00036846.2010.508722:

[4] Conti, G., Lo Turco, A. & Maggioni, D. Empirica (2014) Rethinking the import-productivity nexus for Italian manufacturing, Empirica, Volume 41, Issue 4, p. 590, DOI:10.1007/s10663-013-9215-1

ների աճով[1]: Այս դեպքում մեքենաների և սարքավորումների ներմուծումը ավելացնում է աշխատուժի արտադրողականությունը, երբ աշխատողները ձեռք են բերում համապատասխան գիտելիք վերջիններս յուրացնելու (unbundle) նպատակով (մարդկային կապիտալի զարգացման միջոցով), իսկ նոր տեխնոլոգիաների յուրացում կարող է արձանագրվել նաև առանձին ընկերությունների կողմից, երբ պատրաստի՝ վերջնական սպառման համար նախատեսված ապրանքների լայն տեսականու ներմուծումը հայրենական արտադրողներին հնարավորություն է տալիս ավելացնելու իրենց նորարարություններ անելու կարողությունը[2]: Մյուս կողմից՝ միջանկյալ և վերջնական սպառման համար նախատեսված ապրանքների ներմուծումը կարող է ստիպել տեղական արտադրողներին նորարարություններով զբաղվել և դառնալ ավելի արդյունավետ, որպեսզի կարողանան մրցակցել ներմուծվող ապրանքների հետ[3]: Սպառողական ապրանքների ներմուծումը հանգեցնում է նրան, որ նույն ոլորտի տեղական արտադրողները, նորարարություններ իրականացնեն և վերանայեն մի շարք գործառույթներ և գործընթացներ, որպեսզի կարողանան մրցակցել օտարերկրյա մրցակիցների հետ[4]: Արդյունքում նրանք սկսում են գործել առավել արդյունավետ, ինչն էլ, ի վերջո, բերում է արտադրողականության աճի[5]: Իսկ, ընդհանուր առմամբ, ներմուծման ազդեցությունը արտադրողականության աճի վրա կախված է ինչպես շուկայի կառուցվածքից, այնպես էլ ինստիտուցիոնալ գործոններից[6]: Ոչ կատարյալ մրցակցության դեպքում տեղական արտադրության ծավալները կարող են կրճատվել ներմուծման ծավալների աճին զուգընթաց, որի արդյունքում ներդրումների ծավալները ևս կարող են նվազել, ինչն էլ իր հերթին կհանգեցնի արտադրողականության կրճատմանը[7]: Մյուս կողմից՝ կապիտալ և միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանք-

---

1 Shandre Mugan Thangavelu & Gulasekaran Rajaguru (2004) Is there an export or import-led productivity growth in rapidly developing Asian countries? a multivariate VAR analysis, Applied Economics, 36:10, p.1084, DOI:10.1080/0003684042000246795.

2 Shandre Mugan Thangavelu & Gulasekaran Rajaguru (2004) Is there an export or import-led productivity growth in rapidly developing Asian countries? a multivariate VAR analysis, Applied Economics, 36:10, p.1084, DOI:10.1080/0003684042000246795.

3 Նույն տեղում:

4 Sangho Kim, Hyunjoon Lim & Donghyun Park (2009) Imports, exports and total factor productivity in Korea, Applied Economics, 41:14, p.1821, DOI: 10.1080/00036840601032243.

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում:

7 Նույն տեղում:

ների ներմուծումը, որոնք չեն կարող արտադրվել տեղական շուկայում, հայրենական արտադրողներին հնարավորություն է ընձեռում տեղական ընկերություններին բարձրացնել արտադրողականությունը[1]:

Իսկ, ընդհանուր առմամբ, արտադրողականության տեսանկյունից կարևոր գործոն է համարվում մասշտաբի էֆեկտին հասնելը, որի վրա հիմնականում ազդում է ներքին շուկայի չափը: Մեծ չափերի հասնող շուկան հնարավորություն է տալիս ընկերություններին հասնել մասշտաբի էֆեկտի և օգտվել դրա ընձեռած հնարավորություններից, իսկ գլոբալացման պայմաններում օտարերկրյա շուկաները հանդես են գալիս որպես տվյալ երկրի ներքին շուկայի փոխարինողներ, հատկապես փոքր երկրների համար, քանի որ արտաքին առևտուրն, ընդհանուր առմամբ, դրական ազդեցություն է գործում տնտեսական աճի վրա[2]: Սակայն միայն ներքին շուկան չի կարող ապահովել մասշտաբի էֆեկտ (տնտեսապես հիմնավորված չի լինի նոր տեխնոլոգիաների ներմուծումը և ներդրումն ու արտադրական գործընթացների արդիականացումը, եթե տվյալ շուկայում մրցակցությունն ուժեղ չէ): Իսկ օտարերկրյա շուկաներում մրցակցությունը կարող է ստիպել ընկերություններին էլ ավելի բարձրացնել արտադրանքի որակը, նոր և ավելի արդյունավետ գործընթացներ ներդնել (նոր տեխնոլոգիաների ներմուծմամբ և կիրառմամբ)՝ գործառնական արդյունավետություն («operational effectiveness», երբ ընկերությունը նույն գործունեությունն ավելի լավ է իրականացնում, քան մրցակիցները[3]) ապահովելու նպատակով, ինչի հետևանքով էլ կնվազի մեկ միավորի ինքնարժեքը, և ընկերությունները գնային առումով էլ ավելի մրցունակ կարող են դառնալ և մրցակցել օտարերկրյա շուկաներում ինչպես տվյալ երկրի, այնպես էլ այլ երկրների արտադրողների հետ: Դեռ ավելին՝ ակնկալվող ապագա շահույթը կարող է հանգեցնել նրան, որ ընկերությունները ավելացնեն հետազոտությունների ու մշակումների (Research & Development) վրա ուղղվող ծախսերը և ավելի շատ նորարարություններով զբաղվեն, որն ավելի շատ կնկատվի արտահանման ուղղվածություն ունեցող ընկե-

---

[1] Նույն տեղում:

[2] Sala-i-Martín, Xavier, Bilbao-Osorio, Beñat, Di Battista, Attilio, Drzeniek Hanouz, Margareta, Geiger, Thierry and Galvan, Caroline (2014). "The Global Competitiveness Index 2014–2015: Accelerating a Robust Recovery to Create Productive Jobs and Support Inclusive Growth," Chapter 1.1 in *The Global Competitiveness Report 2014–2015: Full Data Edition*, ed. Klaus Schwab, Geneva, Switzerland: World Economic Forum, p.8.

[3] Porter, Michael (1998). *On Competition*, A Harvard Business Review Book, Harvard Business School Press, Boston, MA: United States pp.40, 42-46.

րությունների պարագայում, քան ներմուծման փոխարինմամբ զբաղվող ընկերությունների մոտ[1]:

Մյուս կողմից՝ ավելի բարդ և ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծումը և կիրառումը տվյալ երկրում պայմանավորված է երկրների կլանման, յուրացման կարողությունից (absorptive capacity): Գլասը և այլոք ցույց են տվել, որ Բրազիլիայի, Ռուսաստանի, Հնդկաստանի և Չինաստանի պարագայում կապիտալի (դասվող որպես բարձր տեխնոլոգիա) ներմուծումը ասոցացվում է համեմատաբար ավելի բարձր ընդհանուր գործոնային արտադրողականության հետ, իսկ այդ ապրանքների ներմուծման ազդեցությունը կախված է նշված երկրների կլանման, յուրացման կարողությունից[2]:

Կիմը և այլոք Հարավային Կորեայի օրինակով վերլուծության արդյունքում պարզել են, որ կապիտալ և սպառողական ապրանքների ներմուծումը, Մեծ յոթնակից («G7» երկրներից) դրական ազդեցություն են թողնում ընդհանուր գործոնային արտադրողականության վրա, մինչդեռ հումքի ներմուծման պարագայում որևիցե ազդեցություն չի արձանագրվել[3]: Հեղինակները նաև եզրահանգում են, որ սպառողական ապրանքների ներմուծումը ավելի ուժեղ է դարձնում մրցակցությունը Կորեայում և ստիպում ներմուծման փոխարինմամբ զբաղվող կորեական ընկերություններին դառնալու ավելի մրցունակ՝ բարելավելով ապրանքների որակը, կրճատելով ծախսերը կամ երկուսը միաժամանակ (նոր և արդյունավետ տեխնոլոգիաների ներմուծում, նորարարություններ և այլն)[4]: Իսկ կապիտալ ապրանքները օգնում են կորեական ընկերություններին ավելի արտադրողական դառնալ[5]: Եվ եթե որոշ կապիտալ ապրանքներ չեն արտադրվում Կորեայում, ապա վերջիններիս ներմուծումը ընկերությանը հնարավորություն է ընձեռում ոչ միայն ավելի արտադրողական դառնալ, այլ նաև ընդլայնել արտադրվող ապրանքների տեսականին, ինչպես նաև հանդես են գալիս որպես նոր տեխնոլոգիաների փո-

---

[1] Sangho Kim, Hyunjoon Lim & Donghyun Park (2009) Imports, exports and total factor productivity in Korea, Applied Economics, 41:14, p.1821, DOI: 10.1080/00036840601032243.

[2] Alexander Glas, Michael Hübler & Peter Nunnenkamp (2016) Catching up of emerging economies: the role of capital goods imports, FDI inflows, domestic investment and absorptive capacity, Applied Economics Letters, 23:2, p.120, DOI: 10.1080/13504851.2015.1054065.

[3] Sangho Kim, Hyunjoon Lim & Donghyun Park (2009) Imports, exports and total factor productivity in Korea, Applied Economics, 41:14, pp.1828-1829, DOI: 10.1080/00036840601032243.

[4] Նույն տեղում, էջ 1829-1830:

[5] Նույն տեղում, էջ 1830:

խանցման աղբյուր[1]: Ներմուծումը դրական ազդեցություն է ունենում ՀՆԱ-ի աճի վրա, իսկ տեխնոլոգիաների փոխանցումը ավելի մեծ ազդեցություն է թողնում ընդհանուր գործոնային արտադրողականության, քան ՀՆԱ-ի վրա[2]:

Թանգավելուն և Ռաջանգուրուն Արևելյան Ասիայի երկրների (Ֆիլիպիններ, Հնդկաստան, Ինդոնեզիա, Մալայզիա, Սինգապուր, Տայվան, Հոնգ Կոնգ, Ճապոնիա, Թայլանդ) տվյալների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պարզել են, որ երկարաժամկետ հատվածում ներմուծումը, ընդհանուր առմամբ, դրական ազդեցություն է ունեցել աշխատուժի արտադրողականության վրա, որի արդյունքում եզրահանգել են, որ ներմուծումը դրական է ազդում տնտեսական աճի վրա երկարաժամկետ հատվածում[3]: Ուսումնասիրվող 9 երկրներից՝ Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Մալայզիայի և Տայվանի դեպքում աշխատուժի արտադրողականության և ներմուծման միջև փոխառնչություններն ուսումնասիրելիս հեղինակները եզրակացրել են, որ այդ երկրներում գոյություն ունի, այսպես կոչված, «արդյունավետ պարբերաշրջան» (virtuous cycle) աշխատուժի արտադրողականության և ներմուծման միջև[4]:

Իսկ ըստ Ավոկուզեի ներմուծումը կարող է հանդիսանալ կարևոր գործոն տնտեսական աճի ապահովման գործում, քանի որ արտահանման ծավալների աճի զգալի մասը սովորաբար պայմանավորված է ներմուծման ծավալների արագ աճով[5]: Լատինական Ամերիկայի երեք երկրների (Արգենտինա, Կոլումբիա և Պերու) պարագայում վերջինս ցույց է տվել, որ ներմուծման ազդեցության չափը տնտեսական աճի վրա համեմատաբար ավելի ուժեղ է, քան արտահանման ազդեցության չափը, որի արդյունքում Ավոկուզեն եզրահանգել է, որ ինչպես արտահանումը, այնպես էլ ներմուծումը կարևոր դեր են խաղում տնտեսական աճի ապահովման գործում[6]: Հեղինակի վերլուծության մեկ այլ արդյունքն է համարվում այն, որ երեք երկրներում նկատվել է տնտեսական աճով

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 1831:

[3] Shandre Mugan Thangavelu & Gulasekaran Rajaguru (2004) Is there an export or import-led productivity growth in rapidly developing Asian countries? a multivariate VAR analysis, Applied Economics, 36:10, p.1089, DOI:10.1080/0003684042000246795.

[4] Նույն տեղում:

[5] Titus O. Awokuse (2008) Trade openness and economic growth: is growth export-led or import-led?, Applied Economics, 40:2, p.161, DOI: 10.1080/00036840600749490.

[6] Նույն տեղում, էջ 172:

պայմանավորված արտահանման և ներմուծման ծավալների փոփոխություն[1]:

Ֆոսուն[2] Ենթասահարյան Աֆրիկայի 33 երկրների տվյալների հիման վրա կատարված վերլուծության արդյունքում եզրահանգել էր, որ ներմուծման անկայուն հոսքերը բացասաբար են ազդել ՀՆԱ-ի աճի վրա, ուստի պետք է կարևորել ներմուծման կայուն հոսքերի առկայությունը, որի արդյունքում հնարավոր կլինի տնտեսական աճը Ենթասահարյան Աֆրիկայում, իսկ արտահանման կայուն հոսքերը կարևորություն են ստանում միայն այն դեպքում, երբ դրանք իրենց հետևից հանգեցնում են ներդրումների և ներմուծման հոսքերի ավելացմանը: Ներմուծման ծավալների ավելացման տեսանկյունից համապատասխան քաղաքականության միջոցառումներից մեկը կարող է լինել ֆինանսավորման առկայության խնդրի լուծումը՝ ներառյալ արտարժույթի կայուն հոսքերի ապահովումը (արտահանման ծավալների աճը)[3]:

Քրիստիանփոլլերը և Օլսոնը վերլուծությունների արդյունքում եզրահանգել են, որ Լատինական Ամերիկայի մի շարք երկրների պարագայում գոյություն չունի հստակ և ընդհանուր մոտեցում տնտեսական քաղաքականության հանդեպ՝ մի շարք երկրներ կարող են տնտեսական աճ ապահովել խրախուսելով արտահանման ծավալների աճը, մինչդեռ այլ երկրների պարագայում տնտեսական աճ կարող է ապահովվել ներմուծման ծավալների աճով պայմանավորված[4]: Իսկ կարճաժամկետ ժամանակահատվածում ներմուծման ծավալների փոփոխության վրա ազդում են արտահանման և կապիտալի աճի տեմպերը[5]: Մահադևանը և Սուրադին էլ նմանատիպ վերլուծության արդյունքում շեշտադրել են կայուն ՀՆԱ-ի աճի ապահովմանն ուղղված երկրի ներսում իրականացվող

---

[1] Նույն տեղում:

[2] A.K. Fosu (2001) Economic Fluctuations and Growth in Sub-Saharan Africa: The Importance of Import Instability, The Journal of Development Studies, 37:3, p.80, DOI: 10.1080/00220380412331321971.

[3] A.K. Fosu (2001) Economic Fluctuations and Growth in Sub-Saharan Africa: The Importance of Import Instability, The Journal of Development Studies, 37:3, p.80, DOI: 10.1080/00220380412331321971.

[4] Werner Kristjanpoller R & Josephine E. Olson (2014) Economic Growth in Latin American Countries: Is It Based on Export-Led or Import-Led Growth?, Emerging Markets Finance and Trade, 50:sup1, p.16, DOI: 10.2753/REE1540-496X5001S101

[5] Նույն տեղում, էջ 17:

քաղաքականության կարևորությունը, որի շնորհիվ հնարավոր է ապահովել ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման ծավալների աճ[1]:

Փաչեքո-Լոփեզը[2] Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրում տեղ գտած ազատականացումից հետո, պարզել է, որ Մեքսիկայի պարագայում թեպետ երկիրը համարվում է առաջատար արտահանողներից մեկը, ներմուծման և արտահանման հավասարակշռումը և ընթացիկ հաշվի հաշվեկշիռը կարևոր դեր են խաղում տնտեսական աճի կայունության ապահովման գործում: Իսկ առևտրի ազատականացումը պետք է ուղեկցվի այնպիսի քաղաքականությամբ, որը համակարգում է առևտրի և արդյունաբերական քաղաքականությունները ներքին և արտաքին հավասարակշռություն ապահովելու նպատակով[3]:

Մյուս կողմից՝ ըստ Գլիսթոսի արտասահմանից ստացվող դրամական փոխանցումներ ստացող երկրների պարագայում (հատկապես ՀՆԱ-ի հանդեպ որոշակի մասնաբաժին կազմելու դեպքում), վերջիններիս ծավալների աճը կարող է հանգեցնել ներմուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկի ավելացմանը[4], ինչն էլ իր հերթին կարող է ավելացնել ինչպես առևտրի, այնպես էլ ընթացիկ հաշվի պակասուրդները (հատկապես վերջնական սպառման համար նախատեսված՝ սպառողական ապրանքների ներմուծման ծավալների փոփոխության պարագայում):

Վերը նշվածից կարելի է եզրահանգել, որ կախված երկրի չափից, տնտեսական զարգացման համապատասխան փուլում գտնվելու հանգամանքից, ներքին շուկաներում առկա մրցակցության աստիճանից, ինչպես նաև դրամական փոխանցումներ ստացող երկրի կարգավիճակից տարբեր տեսակի (կապիտալ, միջանկյալ սպառման համար նախատեսված և սպառողական կամ վերջնական սպառման համար նախատեսված ապրանքներ) ներմուծվող ապրանքների ծավալների փոփոխությունը տարբեր կերպ է ազդում երկրների տնտեսական աճի, արտադ-

---

[1] Renuka Mahadevan and Sandy Suardi (2008) A dynamic analysis of the impact of uncertainty on import- and/or export-led growth: The experience of Japan and the Asian Tigers, Japan and the World Economy, 20, p.172, DOI: 10.1016/j.japwor.2006.10.001

[2] Penélope Pacheco-López (2005) The effect of trade liberalization on exports, imports, the balance of trade, and growth: the case of Mexico, Journal of Post Keynesian Economics, 27:4, pp.613-614, DOI: 10.1080/01603477.2005.11051459

[3] Penélope Pacheco-López (2005) The effect of trade liberalization on exports, imports, the balance of trade, and growth: the case of Mexico, Journal of Post Keynesian Economics, 27:4, p.614, DOI: 10.1080/01603477.2005.11051459:

[4] Nicholas P. Glytsos, (2005),"The contribution of remittances to growth", Journal of Economic Studies, Vol. 32, Iss 6, p. 469, DOI: 10.1108/01443580510631379.

րողականության (հատկապես ընդհանուր գործոնային արտադրողականության), արտահանման ծավալների փոփոխության, ներքին շուկայում մրցակցության, ինչպես նաև նորարարությունների վրա:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԵՐԸ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԱՆՆԱ ՌՈՒԶՎԵԼՏԻ ՄԱԿԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր: Գրականության վերլուծության հիման վրա փորձ է արվել հոդվածում բացահայտել ներմուծման դերը երկրների տնտեսական աճի ապահովման գործում: Արդյունքում ստացվել է, որ կախված երկրի չափից, տնտեսական զարգացման համապատասխան փուլում գտնվելու հանգամանքից, ներքին շուկաներում մրցակցությունից, ինչպես նաև դրամական փոխանցումներ ստացող երկրի կարգավիճակից տարբեր տեսակի ներմուծվող ապրանքների ծավալների փոփոխությունը տարբեր կերպ է ազդում տնտեսական աճի, արտադրողականության, արտահանման ծավալների փոփոխության, ներքին շուկայում մրցակցության և նորարարությունների վրա:

Բանալի բառեր. *ներմուծում, տնտեսական աճ, արտադրողականություն, մրցակցություն, արտահանում, կապիտալ, միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանք, վերջնական սպառման համար նախատեսված ապրանք:*

РОЛЬ ИМПОРТА В ОБЕСПЕЧЕНИИ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА В РАЗЛИЧНЫХ СТРАНАХ

АННА РУЗВЕЛЬТОВНА МАКАРЯН, *к.э.н.*
научнный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация: На основе обзора литературы предпринята попытка определить роль импорта в обеспечении экономического роста в различных странах. Автор приходит к выводу, что в зависимости от размера экономики страны, стадии экономического развития, факта того, что данная страна является “получателем денежных переводов” или нет, различные виды импортируемых товаров по-разному влияют на экономический рост, производительность, экспорт, конкуренцию на местном рынке, а также на инновации.

Ключевые слова: *Импорт, экономический рост, производительность, экспорт, конкуренция, инновации, капитал, промежуточные товары, конечные товары.*

THE ROLE OF IMPORTS IN ENSURING ECONOMIC GROWTH IN VARIOUS NATIONS

ANNA ROOSEVELT MAKARYAN, *Ph.D. in Economics*
Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract: The author attempts to identify the role of imports in ensuring economic growth in various nations based on the literature review. The author concludes that depending on the size of the economy, stage of economic development, the fact of being considered as a "remittance-recipient" nation, various types of imported goods differently affect the economic growth, productivity, exports, competition in the local market, and innovations.

Keywords: *Import, economic growth, productivity, export, competition, innovation, capital, intermediary goods, final goods.*